

Ռ.Ս.ՂԱԶԱՐՅԱՆ, Գրաբարի բառարան, Երևանի Պետական Համալսարանի Հրատ., Ե., 2000, հ. Ա (683 էջ), հ. Բ (657 էջ):

Թեև Հայ բառարանագրությունը Հարուստ ավանդույթներ ունի, այնուամենայնիվ, գրաբարի բառարանագրական հուշարձաններն ստեղծվել են նախորդ դարերում:

Եթե նկատի ունենանք, որ գրաբարի բառարանագրական կոթողային աշխատություններից վերջինը լույս է տեսել մեզանից չուրջ մեկուկես դար առաջ, ապա ցավով պետք է արձանագրել, որ գրաբարի բառային կազմի քննության չընթացումը ստեղծել է խոր անընթեռն Հայ բառարանագրության ներսում: Առ այսօր հրապարակի վրա չունենք գրաբարի Հոմանիշների, հականիշների, Համանունների, բառակազմական, կապակցելիության (բառակապակցական), պատմական, դարձվածաբանական և այլ կարգի բառարաններ: Մանավանդ, խիստ զգացվում է գրաբար-աշխարհաբար (արևելահայերեն) բառարանի կարիքը:

Բառարանագրական չուրջ մեկուկեսդարյա բացը լրացնելու է գալիս Հրապարակի վրա գտնվող «Գրաբարի բառարան» երկհատոր աշխատությունը, որ Հեղինակել է բանասիրության դոկտոր, պրոֆ. Ռ.Ս.Ղազարյանը, խմբագրել բանասիրության թեկնածու Գ.Բ.Թոսունյանը:

Ունենալով լեզվի Համաժամանակյա և տարածամասնակյա կտրվածքների խոր իմացություն և բառարանագրական Հարուստ փորձ՝ Հեղինակը նպատակադրել և գլուխ է բերել գրաբարի բացատրական բառարան կազմելու աշխատանքները: Գրաբարի բառացանկն ընտրելիս Հեղինակը հետևել է այդ մարզի դասական հուշարձանին՝ ՆՀԲ-ին, որ ընդգրկում է գրաբարի ողջ բառային կազմը՝ իր քերականական ու իմաստային բազմազան դրսևորումներով ու բնագրային վկայություններով: Նա միաժամանակ օգտվել է Հր.Աճառյանի «Հայերէն արմատական բառարանից», որտեղից էլ դուրս է բերել Հայ Հին մատենագրական երկերում սփռված և Հր.Աճառյանի իսկ կողմից վկայված նորագյուտ բառերը, որոնք ՆՀԲ-ում տեղ չեն գտել:

Ինչո՞վ է խնդրո առարկա բառարանը լրացնում գրաբարի մեծարժեք բառարաններին:

Առաջին Հանգամանքը, որ ուզում ենք առանձնակի շեշտել, գուտ գրաբարյան բառային կազմի ընտրությունն է՝ դասական և հետդասական շրջանների ճշգրտված սահմաններով: Բառարանում տարբերակված և ի մի է բերված գրաբարի բառապաշարը. «տեղ են գտել 5 – 11-րդ դարերի ինքնուրույն և թարգմանական երկերում վկայուած բառերը, ոճերն ու դարձուածքները, որոնց մեծ մասը նոյնութեամբ կամ ձևաիմաստային որոշ փոփոխութիւններով գործածական է Հայոց լեզուի զարգացման յետագայ փուլերում» (էջ 5): Բառարանում տեղ են գտել նաև մի շարք բառեր, որոնք Հանդիպում են զանազան ժողովածուներում (Հարանց վարքեր, Հայսմավուրքներ, Ծառընտիրներ և այլն), և ինչպես վկայում է Հեղինակը, դրանք ուշ շրջանի կազմություններ են (12 – 13-րդ դարեր):

Փաստորեն այս բառարանը միանշանակ անդրադառնում է գրաբարի զարգացման դասական և հետդասական շրջանների բառապաշարին (V – XI դդ.)՝ դա էլ դիտելով Հին Հայերենի բառային կազմի ատաղձ:

Թող որ այս Հարցում ՆՀԲ-ի Հեղինակները ցուցաբերում են բավական առած-գական մոտեցում՝ բառարանում զետեղելով նաև այնպիսի միավորներ, որոնք Հանդիպում են Ն.Շնորհալու, Ն.Լամբրոնացու, Հ.Թլկուրանցու, Հ. Երզնկացու և ուրիշների ստեղծագործություններում և անվերապահորեն միջինհայերենյան կազմություններ են:

Ներկա րառարանի կարևոր արժանիքներից է նաև բառիմաստների համակողմանի բացատրությունը, որ տրվում է մատչելի եղանակով: Բառի, բառաձևի կամ կապակցության նշանակություն(ներ)ը տրվում են բառակապակցություններով (նկարագրական բացատրություն) կամ հոմանիշների միջոցով: Այս ուղիով հեղինակը սպառնիչ կերպով բացահայտել է բառերի իմաստային կառուցվածքի նրբին նշանակությունները, որոշ բառերի պարագային նշվում են նաև զրանց փոխաբերական իմաստները:

Ռ. Նսպարյանը հրաժարվել է բոլոր բառերի իմաստների համար բնագրային օրինակներ վկայելուց՝ ելնելով այն հանգամանքից, որ ՆՀԲ-ն անհրաժեշտ մանրամասնությամբ դրանք ներկայացրել է: Այնուհանդերձ, հեղինակը հաճախ բնագրային օրինակներ վկայում է այն բառերի համար, որոնք ՆՀԲ-ից դուրս են մնացել, մյուս կողմից, մատենագիտական վկայություններով արժեքավորում է հազվադեպ գործածություն ունեցող բառերը կամ էլ ընդհանուր գործածական բառերի մասնավոր նշանակությունները (անխալամ՝ «գանգ չունեցող», անկարճ՝ «ծոց, գիրկ», անկումուդի՝ «դեռ հեծնելու չվարժեցրած, տրմուդ, անվարժ, խամ ձի», րանուկան՝ «պալատական տիկիներ», դեկանուբիւն՝ «գիւղացիութիւն», դեղ՝ «բուժիչ խոտաբույս», թիասոս «խումբ-խումբ», յուրան՝ «կնուճ, պուտուկ», ցենեմ՝ «աստղ», Բօրակին՝ «հոր կիներ», դարափլակ՝ «լեռան փլուածք», դարափոր՝ «դարափոս» և այլն):

Բառիմաստային բացատրությունները շահել են նաև այն առումով, որ հեղինակը բծախնդրությամբ, ըստ անհրաժեշտության, նշում է նաև փոխառյալ բառերի աղբյուրը, ինչպես՝ դեսպան, բազե, դժոխք (պհլ.), գեհեն (եբր.), գերեզման (պրսկ.), ակումիտ, երեցու, եկեղեցի (հուն.), ծրար (ասոր.) ևն:

Փոխառյալ բառերի մատուցման այս եղանակը զրախոսվող բառարանին տալիս է ստուգաբանական և բառաքննական ուղղվածություն:

Հեղինակի ընդհանուր լեզվաբանական մոտեցումները չեն սահմանափակվել միայն փոխառյալ բառերի մատուցման շրջանակներում. նա ցույց է տալիս այլև որոշ բառարանային միավորների բառագործածական ոլորտը դրանք ուղեկցելով համապատասխան նշումներով, ինչպես՝ առաքելածանօթ (եկեղց.), բիտոն (կենդ.), ասպազան (բաբ.), բիր (կզմիս.), կենդանակերպ (աստղ.), աղօթք (կրոն.) ևն:

Տարբեր ոլորտների պատկանող մասնագիտական եզրույթները, որոնք առհասարակ ունեն ընդհանուր գործառական արժեք, իմաստային բացատրությունից զատ, տրվում են նաև լատինատառ գիտական անվանումով, ինչպես՝ Արագիլ (կենդ.): 1. Արագիլների ընտանիքին պատկանող թռչուն (Ciconia ciconia), 2. Տառեղների ընտանիքին պատկանող ջրային թռչուն. տառեղ (Ardea cinerea): Դդմենի (բաբ.), դդմազգիների ընտանիքին պատկանող բոյս. դդմ (Cucurbita):

Գրախոսվող բառարանն ունի ընդգծված քերականագիտական արժեք: Այն հաղորդում է անհրաժեշտ հնչյունաբանական և քերականական տեղեկություններ տվյալ բառի և նրա քերականական ձևերի վերաբերյալ՝ այգալիսով ամբողջացնելով գլխաբառի քերականական-ձևաբանական բնութագիրը:

Բառարանում քերականական անհրաժեշտ նշումներով բնութագրվում են բոլոր բառերը, տրվում են բառաթեքական (հոլովման և խոնարհման) ձևերը, նշվում բառերի խոսքիմասային արժեքները:

Հայտնի է, որ հոլովվող անունները զրաբարում թեքվում են պարզ և խառը հոլովումներով. հոլովման այդ տիպերը հստակ երևում են եզակի և հոգնակի սեռականի ձևերում. ըստ այդմ, հեղինակն անունների դիմաց նշում է դրանց թեքման ձևերի ցուցիչները, ինչպես՝ Ամանակ. ի, աջ, Ամբոխ. ի, ից և այլն:

Ելնելով այն Հանգամանքից, որ խառը Հոլովումն սկսվում է եզակի գործիականից՝ Հեղինակն առանձին դեպքերում վկայում է եզակի սեռականի և գործիականի ձևերը. Հմմտ. Վաղր. դեր, զերբ: Մարաւ. ոյ, ով:

Բառահոգվածի մատուցման այս եղանակն արժեքավորվում է նաև Հոլովակազմության առումով. ըստ անհրաժեշտության, սեռականի եզակի և Հոգնակի ձևերին զուգահեռ տրվում է նաև Հոգնակի ուղղականի Հոլովաձևը, ինչպես՝ Հարսն. սին, սունք, սանց: Դուստր. դստեր, երք, երաց կամ երց են:

Հոլովական զուգաձևությունն ունեցող բառերը, որոնք բնութագրվում են տարբեր Հոլովումներով, մատուցվում են Համապատասխան Հոլովիչներով, ինչպես՝ Աղօտ. ի, ից կամ աց: Աման. ոյ, ոց կամ ի, աց են:

Անկանոն կամ զարտուղի Հոլովումն ունեցող գոյականները, ինչպես նաև դերանունները տրվում են գրեթե բոլոր Հոլովաձևերով՝ եզակի և Հոգնակի թվով:

Բայական Հարացույցի Համար կարևորվում են բայական բառույթի Հիմքերը՝ ներկայի և անցյալի: Բառարանում բոլոր բայերը տրվում են ելակետային՝ անորոշ դերբայի ձևով: Քանի որ առաջին Հիմքը միանգամայն տեսանելի է (այն Համընկնում է անորոշի Հիմքին), ուստի Հեղինակը բայերի Համար նշում է նաև դրանց երկրորդ Հիմքը (անց. կատ. եզ. թվ. 1-ին դեմք), որից էլ երևում են այդ Հիմքի կառուցվածքային տիպերը՝ պարզ (կիզուկ - կիզի, բեկանեւ - բեկի), բաղադրյալ ցույական (բազմեւ - եցայ, աղալ - ացի) և ի թույլ բաղադրիչով (մածնուկ - ծնայ, կորնչեւ - ընայ):

Ի վերա այսր ամենայնի, Ռ. Ղազարյանը նշում է նաև 2-րդ Հիմքից կազմվող բուն Հրամայականի և անցյալ դերբայի ձևերը, ինչպես՝ դառնալ. դարձայ, դա՛րձ կամ դարձի՛ր, դարձեալ, այտնուլ. տեայ, տի՛ր, տուցեալ են:

Բառերի խոսքիմասային արժեքները նշելիս Հեղինակը, ըստ իս, ճիշտ է կողմնորոշվել ձևաբանորեն տարարժեք բառերի իմաստների բաշխման Հարցում:

Ձևաբանորեն տարարժեք այն բառերը, որոնք Հստակ տարբերակվում են բառիմաստային դաշտով, բառարանում տրված են զատված իմաստներով ու արժեքներով, ինչպես՝ Աղօթական. ա. աղօթքին յատուկ՝ վերաբերող, աղօթք պարունակող, գ. աղօթք անող, աղօթող: Բիւրաւատիկ. ա. բազմապատիկ, մ. բիւր անգամ:

Եթե այդ կարգի բառերը տարարժեքությունն արտահայտում են իրենց ընդհանուր իմաստային կառուցվածքով, չտարբերակված ձևով, ապա բառարանում դրանց Համար տրված է ընդհանուր բացատրություն: Հմմտ. Անդուլ. ա.մ. դուկ ու զաղար չունեցող, անընդհատ գործող, անդադար, շարունակ: Ամուրի. ա.գ. դեռևս չամուսնացած տղամարդ կամ կին. այրի մնացած են:

Ռ. Ղազարյանը բառերի բառաքերականական բազմիմաստությունը ցույց է տալիս նաև գլխաբառի և նրա թեքման ձևերի, ինչպես նաև ածանցական կազմությունների շրջանակներում: Հմմտ. Թաքուստ. գ. 1. թաքնվելը, թաքցնելը, 2. թաքստարան, թաքցնելու տեղ, թաքստոց, ա. թաքուն, գաղտնի, ծածուկ. - Թաքստիւ կամ Թաքստեամբ. մ. թաքնաբար, ծածկաբար, գաղտնի կերպով են:

Հեղինակը, ձեռքի տակ ունենալով մատենագիտական Հարուստ նյութ, առանձնակի բարեխղճությամբ փարտագրել և գրեթե ամբողջական կերպով բառարան է ներմուծել գրաբարի դարձվածաբանական միավորներն ու կայուն կապակցությունները:

Այս բառարանում առաջին անգամ Հանդիպում են դարձվածքներ, բայական ու անվանական Հարադրություններ, որոնք նախորդ բառարաններում արձանագրված չեն, ինչպես՝ գալ ի գգաստութիւն (զգաստանալ, սթափվել), ի բերան փողոտել (խեղդամահ անել), տալ ի բանտ (բանտը նետել), տալ յագգ մեծ (մեծ

ազգ դարձնել), արփայագնաց լինել (արագորեն հեռանալ՝ հեռու սլանալ), գազանակուր լինել (գազանի կերակուր դառնալ), ածել ի համբոյր և ի բծնիս (սովոր և քծնող դարձնել), ածել յերկիւղ և ի խրատ (վախեցնել և խրատել), ածել սուսերաւ (սրահար սրախողխող անել), ածել յուղղութիւն (ուղղել դարձի բերել), ածել ի կատարումն (ավարտել, վերջացնել), գուպարս նստել (խմբով խմբված նստել), նկան կալ բանին (ասած խոսքին հաստատ մնալ), որդի աղեաց (հարազատ՝ սիրելի որդի), վերին բանգիտութիւն (աստղաբաշխություն), անուշակ կերակուր (աստվածների՝ անմահություն պարգևող կերակուր) և այլն:

Գրախոսվող բառարանն ունի նաև կիրառական կարևոր արժեք. այն մեծապես նպաստելու է գրաբար բնագրեր թարգմանելու տքնաջան աշխատանքին:

Անկասկած է, որ գրաբարով ստեղծված մատենագիտական հարուստ ժառանգությունը հասու է միայն գրաբարի մասնագետներին, մինչդեռ նրանք անգամ այդ մատյանները թարգմանելիս չեն կարող գործը գլուխ բերել առանց բացատրական բառարանների: Այդ առումով սույն բառարանը հնարավորինս ընդգրկուն է ներկայացնում բառահոգվածի մեկնաբանությունները բառիմաստներ ընտրելու լայն հնարավորություն ընձեռելով: Այն ցույց է տալիս բառի բազմիմաստ բոլոր նշանակությունները, ուղղակի և փոխաբերական իմաստները, բառագործածական ոլորտը, բացատրում է հենաբառով կազմված ոճերն ու դարձվածքները, հարադրություններն ու նախդրավոր կառույցները, համանուն բառերի նշանակությունները, բայանունները, պատճառական բայերը, միադիմի բայերը, դերբայաձևերը, անգամ նախածանցները և այլն:

Ի լրումն այս ամենի, բառարանում գիտական պատշաճ մակարդակով պահպանվել են բառարանագրության տեխնիկայի կանոնները. բառահոգվածների կազմում բառերի տարբեր նշանակությունները անջատված են արաբական թվանշաններով, համանուն բառազույգերը համարակալված են, դարձվածաբանական միավորներն ու հարադրությունները տրված են տվյալ կառույցի առաջին բառերի կամ դրա դոմինանտ բառի տակ՝ պարբերության սկզբից դրված գծիկով, իմաստային բացատրություններում ճիշտ են կիրառվել զեղչումը և հղումը որպես տնտեսման միջոցներ:

Սույն բառարանը, ինչպես ասվեց, ընդգրկուն ձևով ներկայացնում է գրաբարի բառիմաստների համաժամանակյա վիճակը և կարող է հիմք հանդիսանալ բառիմաստների տարժամանակյա քննության համար՝ մեծապես նպաստելով պատմական բառարանի ստեղծման աշխատանքներին:

Ռ.Ղազարյանի սույն աշխատանքը լուրջ ներդրում է հայ բառարանագրության մեջ և ունի գիտագործնական ու լեզվաբանական մեծ արժեք:

Մեկ նկատառում. աշխատանքում բառահոգվածների բացատրությունները տրված են դասական (գրաբար) ուղղագրությամբ:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե հեղինակը տուրք է տվել դասական ուղղագրությանը: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն բառարանը հասցեագրված է նաև Սփյուռքի Հայագիտական կենտրոններին, ուսումնական ու կրոնական հաստատություններին, պետք է, որ այն շարադրվեր դասական ուղղագրությամբ: Թող որ մեզանում դասական ուղղագրության ջատագովական կոչերը գրեթե մարել են:

Համոզված ենք, որ Ռ.Ղազարյանի «Գրաբարի բառարանը» լայն ընդունելություն կգտնի Հայաստանի և Սփյուռքի Հայագիտական ամբիոններում:

Լ.Մ.ԽԱԶԱՏՐՅԱՆ

Բանասիրության դոկտոր